

զգաստանայ ժողովուրդս այս օրինակէս :
 — Իսկ ինքը յուսահատ և անզգայ առանձնացաւ ի դահոյս և ինքը զինքը սկսաւ ողբալ :

Վաղոց ամսոյն սուաւօտն էր. Շաւարշանու փողոցները ամբողջը կիսոնի, կը զիզուի, և զէպ ի մահապարտաց բանդին դուռը կվազեն : Վոները բացուեցան, և ծանր ծանր քայլերով, աչքերը զէպ ի խոնարհ, վայելահասակ, համեստ և պարկեշտ գնացքով, արի և աներկիւղ, դահիճներով շրջապատեալ Աանդուխտ դուրս ելաւ : — Տեսէք Հայեր, ձեր զշնոյն, տեսէք, ոտքը ձեռքը կապանք ահա ի մահ կտանին. ո՛ւր է թագը, ո՛ւր փառքերը, մերկացաւ այն ամենը Աստուծոյ սիրոյն համար. մեծ է այս փառքը՝ քան երբեմն պայծառ փառաց մէջ չքնադագեղ երեսաց երկրպագութիւն կանկիք, վազեցէք ձեր վերջին մեծարանքը և պատիւը ընծայեցէք իրեն, և համբուրեցէք ոտից և ձեռաց սուրբ կապանքը :

Հասան մահապարտաց կառավանատեղին. — դահճապետը հրաման տուաւ, դահիճը սուրը մերկացաւ, և յարձակեցաւ Աանդխտոյ վերայ, բայց աներեւոյթ զօրութիւնը սողեց, յետս ընկրկեց զինքը, և զարկաւ դահճապետը մեռուց : Վահիճները ամենքը մէկ սրերը մերկացան, բայց կը պատկառին քովը մերձենալ, երեսները երկնային փառօք լուսաւորեալ՝ դահճաց աչքերը շլացան, և սկսան մէկզմէկ կոտորել. — իսկ Աանդուխտ կազօթէ, զօրութիւն կկնայրէ Աստուծոյ, և կցանկայ շուտով հարուածը ընդունիլ : Ահա դահիճներէն յանդուղը սուրը ձեռքը վազեց, և միտց կուսին փափուկ սիրտը : — « Անօրէն

դու, ի՞նչ գործեցիր », գոչեց ժողովուրդը. բայց զետնատարած անկաւ շնչապառ, արեան մէջ կծփայ. և հրեշտակք առին հողին երկինք թռան :

Աանատրուկ կմննէ, յուսահատ ինքը զինքը կկոծէ. ժողովուրդը իւր թագուհոյն սուզը կքաշէ, իսկ ինքը նախաշաւիղ վկայն սուրբ Աանդուխտ Հայաստանն ի բռին կըթռչի երկինք զայն Աստուծոյ նուիրել :

ՄԿՐՏԻՉ ՊԱԼԱՆՆ.

Ի Ս. ԼՅԲԻՄԻՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԵՆԵՊԸՐՀՈՐԳՈՒԹԻՒՆ ՀԵՇԵՍԵՆՈՒՄԸ .

Գ. Շ. ՅԷԼԱՏԱԿԱՐԱՆԻՑ ՀԱՆԱԾ .

1842 ԹԻԻ. 12 ՕԳՈՍՏՈՍԻ.

ՄԱՂԱՐԹՅՆ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆԳՈՒՄԸ .

(Ն-Դ-Ն-Կ-Բ-Է-Ն.)

Միայնակեցի երեսը զէպ ի դուռն էր, ուստի և քարայրը միայն լոյս էր ստանում : Ահան որոյ և շատ պարզ էի տեսնում ես նրա կերպարանքը, որ վեհ էր և պարզ. նայուածքը սաստիկ զգացմունք էր յայտնում տիրութեամբ խառն. բազմեւոյցը երեւում էր, որ հասակը պարթե է, երեսն սպիտակ և խառն կարմրութեամբ, քիթն արծուանման, աչքերը սև՝ մեծ մեծ և սրբատես, ձառագայթաձև արտեանունքներ է պատած, այլ իմն գեղեցիկութիւն էին տալիս երեսին. մօրուքն երկար, լաւ սանտրած, փառահեղ և ձիւնափայլ, ձախտը

լայն և կուչ կուչ եկած, լանջքն լայն, մէջքը բարակ, մասններն երկար և յտակ և ձեռներն սպիտակ, սև սաթից փէրփէր մէն բռնած. - զլին ունէր թաղեքից զթագ, հաղին ղեղնացած՝ կիսամաշ սպիտակ Սալմաստի կտաւից կապայ և զօտիկն կապոյտ գոյն: Աս ամենը նայելես, մին մեծանձնութեան նշան էին ցոյց տալիս քարանցաւի մէջին և կերպարանքի վրայ, որ վշտեր էին երևում, չէր մեծ ազդեցութիւն արած ծերութիւնը:

Հարուստ ժամանակ լուութիւնը շարունակեց մեր մէջը: Աս սկսեցի առարկայ մէջ ձգել, հարցնելով, ճգնաւոր հայր, ի՞նչ է ձեր հիւանդութեան պատճառը. թէ իմացած լինէի, հետս ղեղորայք ունէի, կը բերէի ձեզ համար:

Արդեան, ասաց միայնակեացը փոքր ինչ ժպտալով՝ որդեան՝ մի՞թէ ութսուն ամեայ մին բան էլ աւելի ծերունոց հիւանդութեան պատճառը հարկաւոր է հարցնել և կամ նրան ղեղը ի՞նչ օգուտ կրերէ:

Աւթանասուն բառը ինձ անհաւատալի երևեցաւ, նայելով նրա զուարթ կերպարանացը: - Ճգնաւոր հայր, ձեր կերպարանքին նայած, պատասխանեցի, երևում է, ձեր անցած օրերը շատ չափաւոր էք անցկացրած, ո՞վ կը կարծէ թէ դուք էդքան հասակ ունենաք, ութսուն, քսն լիցի:

Հէնց էս որ լսեց, զլուին առանց բռնադատելոյ վեր բարձրացրեց, աչքերը վերէս նետելով, որոյ մէջին անզգալի բաւականութեան նշաններ էին փայլում, ասեց. ես, ես որդեակ, ճշմարիտ իմացար, կենացըս համարեա՞ կէսն չափաւոր, աւելի չափաւոր եմ անցկացրած . . . բայց . . . բայց: Աւ լուց:

Ճգնաւոր հայր, կրկնեցի, անկեղծ էր առաջարկութիւնս, ըստ որում . . . :

Նա ընդմիջեց խօսքս թէ, որդի, շատ մարդկանց կեանքը չափաւոր անցկացնելոյ իշխանութիւնը իւրեանց ձեռքումն է, եթէ պարագայքն ևս ներկն ինքեան:

Պէտք է աւելացնել պարագայից վերայ, պատասխանեցի, և ժամանակն ևս: Վասն, երեսուն և կարող եմ ասել հարիւր տարի յառաջ այս երկուքը ևս չէր կարող ձեր երեխայութիւնը կամ երիտասարդութիւնը միասին ձեռք բերէր:

Ի՞նչպէս, հարցրեց միայնակեացն, ևս լաւ չհասկացայ ասածդ: Աս հարիւր տարուայ հասակ չունիմ:

Հայրենեաց, պատասխանեցի, հայրենեաց և ազգի հանգամանքը կամ պարագայքը և ժամանակը էնպիսի վատ վիճակումն էին, որք չէին թոյլ տալ ձեզ նմանները և կամ ո՞վ որ լինէր՝ ձեռք բերէր, իսկ այսօր . . . այժմ . . . էս մեր դարը, ուրիշ ժամանակ և պարագայք ունի . . . :

Եսն բարեկամ, ընդ միջեց խօսքս, ասա՛ խնդրեմ, ի՞նչ վիճակի մէջն է հիմի մեր ողորմելի հայրենիքը: Պօղոս հայր սուրբը ձեզանէ առաջ պատմեց թէ, դուք նոր էք եկած էնտեղաց, և լաւ լաւ տեղեկութիւններ և լուրեր ունիք, ասա՛ խնդրեմ, գիրութիւնք, ասպատակութիւնք, և աքսորումն, կեղեցեաց և վանօրէից կողոպտումն, քրիստոնէութեան հալածումն արդարեւ անհետ եղա՞ծ են մեր հայրենեաց մէջէն:

— Հայրենիք բառն արտաբերելիս՝ աչքերն արտասուէքով լքցուեցան, վասն որոյ փոքրը ինչ երեսը միւս կողմը շրջեց՝ մեզ իւր արտասուելը ցոյց չտալոյ համար:

ՂՂմարիտ է հայր սուրբ, ասեցի, ճշմարիտ է, անցկացան, գնացին էն դառն ժամանակները, որ դուք տեսած էիք: Հայաստան, որ չորս հարիւր տարիից աւելի զբրկուած քրիստոնեայ թագաւորի թեւերի տակին հովանաւորվելուցն, դառն արասովում էր և հեծում: Հիմի, փառք Աստուծոյ՝ կառավարվում է Առուսաց քրիստոնեայ թագաւորից: Արդարեւ երջանիկ է հիմի, և աւելի երջանիկ կը լինի այսուհետեւ՝ եթէ Հայաստանի որդիքն կարողանան զնահատել և արդիւնաւորել . . . :—Ասքանի մի բառն զարմանալի փոփոխութիւններ զործեց նորա երեսի վրայ, զոր շուտ տուեց դէպ ի ինձ: Աս կիսակենդան մարդն, երևում էր, որ իսկ և իսկ ցանկութիւն ստացաւ իւր անձն աշխուժութեամբ ուղղել, իւր տեղումն, բնական կերպարանացն՝ ուղղուիլ և փառացի նրատիլ: Բայց տկարութիւնը և անզօրութիւնը չէին ներում ինքեան, վասն որոյ փոքր փոքր բարձի կողմը վեր քաշուելով, զլուսն ուղղեց, կերպարանքը ծռեց ուղիղ դէպ ի ինձ, ուրախ զիմօք և զարմացմամբ հարցրեց, ի՞նչ, ի՞նչ որ տեղաց էգ հզօր քրիստոնեայ թագաւորն, որոյ անունը միայն ի քանի մի ամաց հետէ հեռուանց, երբ ես երեկայ էի, միտքս կը դայ, կլսէիք, կարողացա՞ն անցանել զալ, զինուց զօրութեամբն տիրապետել մեր հայրենիքը, խլել առնել անօրէն Պարսից ձեռքէն: Մի՞թէ, Աւրեմն մեր ձերերն մարգարէացան, որք կասէին թէ, մին Առուս անուն ազգ զարց է փրկէ մեր հայրենիքը . . . բայց էս ևս կը կցէին թէ նոցա հեռաւորութիւնը մեզանից և ճանապարհաց զժուարութիւնները՝ հարիւրաւոր տարիք կքաշէ . . .

մի՞թէ: Փառք, փառք քեզ Աստուած, որ էնքան հոգիս չառեցիր, մինչև թէ չտեսայ աչօք, գոնէ լսեցի ականջօքս, եթէ այսուհետեւ հոգիս աւանդեմ Տէր, էլ սրտումս ոչինչ ցաւ, վիշտ և նեղութիւն չի պէտք է մնայ:

Հայր սուրբ, պատասխանեցի, վերին տեսչութեան և նորա նախախնամութեան առաջին ոչինչ չէ անկարելի: Չէին փութալ նրանք և չէին յառաջանալ՝ եթէ Տղայ Մահամադ խան ներքինին, որոյ անունը քեզ անձանօթ չի պէտք է լինի, չէր կիկլ և աւերել Վարաբաղը, Վրաստանը, Արարատեան զաւառը: Էնքան թըշուտ քրիստոնեայ ժողովրդոց հառաչումն և նոցա խնկելի աղօթքը՝ որ առ Արարիչն բարձրացաւ, ազդեց էնպիսի հզօր թագաւորի սիրտը, շտապիլ զալ՝ ազատել նրանց:

Արբ ազայ Մահամադ խանի անունը արտաբերեցի, իսկ և իսկ նրա կերպարանքը ամպեց, յօնքերը ժողովուեցան, աչքերը լցուեցան, և արտասուենքը սիսեց կաթիլ կաթիլ ցօղիլ պայծառ երեսիցը սպիտակափայլ մօրուսի վրայ և քանի մի անգամ ա՛խ քաշեց:

Արեւում էր, որ էս ողորմելի միայնակեացն երբէք լած չէր Պարսից և Առուսաց կռիւր տասն և հինգ տարի էստուց յառաջ և Հայաստանի մին մասն Առուսաց ձեռքումը մնալն: Մտածեցի ասնեք, ի՞նչ զարմանք որ մարդոյ հետ յարակցութիւն չունենալով, էս պատերազմի անցքը լած չլինէր, բայց էն ժամանակուան թընդանօթները ձայները, որ Մաղարթի սարիցն հեռի չէին ձգվում և թնդվում, մի՞թէ, սրա ականջները էնտուք էլ չլսեց:

Պօղոս վարդապետը, նայելով նրա կերպարանաց թխպելոյն, նշանացի արեց ինձ ու վերկացաւ, և ես էլ ոտի վրայ կանգնեցի, մօտեցայ միայնակեցի աջն համբուրել: Նա ձեռքս պինտ բռնելով՝ թոյլ չտուեց համբուրեմ, ասելով, ես օծեալ չեմ — ուրեմն — և հարկաւոր չեմ ինձ եղպիսի պատիւները, դէ՛ դէ՛ Տէր ընդ քեզ՝ գնաս ամենայն յաջողութեամբ: Հայր, պատասխանեցի՝ ես քանի մի օր մնալոց եմ վանքումը, կը ներեմ որ վերստին դամ ձեր տեսութեանը արժանանալ և ձեր օրհնութիւնը ժառանգել: Բարի միայնակեացն էս առաջարկութեանս ոչինչ պատասխան չտուեց, միայն կրկին կրկին ձեռքս հռփ տալուցը իմացայ որ համաձայնութեան նշան էին: Աւելսպէս Պօղոս վարդապետի հետը դուրս եկանք ու ճանապարհներնիս շարունակեցինք դէպ ի մենաստանը: Եւստիպից ինձ Պօղոս վարդապետը նստիլ մին քարի տակին, փոքր ինչ հաց ուտել, բայց ես ճաշակ չունէի, ըստ որում աղանձիցն կերած էի, իսկ նա հացիցը հանեց ուտելով քայլում էր ու ճանապարհը շարունակում: Առ քեզ ձեր մարդոյ ստամոքքը և մարտողութիւնը:

Միայնակեցի հետ տեսութիւնս և քանի մի բոպէ նորա խօսակցութիւնը՝ ուրիշ մի ազդեցութիւն ունեցաւ վրէս, այս ինքն յոյսս հաստատուն էր, որ քառասուն տարի էս ծածկեալ խորհուրդը բոլոր վանքի միարանութիւնիցը՝ կարողանամ յայտնել, թէպէտ վանահօր և միւս հոգևորականաց կարծիքն իմ յոյսին հակառակն էր:

Միւս օրն ամսի 24-ին վաղ առաւօտեան ժամի հինգը վերկացայ՝ երեկուան նը-

ման որսորդութեան շորերովս ճանապարհ ընկայ դէպ ի քարայրը:

Ելլելուամ, որ դուրս էի եկած խուցէն՝ մոռացած էի ժամացոյցս վեր առնել, վասն որոյ չկարողացայ իմանալ թէ քանի՞ ժամուսն եկի: Երեզակը բաւականին տաք էր՝ երբ հասայ քարանձաւի դուռը: Հազարով, ահով, զոզով, կամաց կամաց ներս գնացի: Միայնակեացը տեղումը նրստած Սաղմոս էր քաղում: Աստուած օգնական ասեցի, մօտեցայ աջը համբուրել, թոյլ չտուաւ: Առաջի նայելն՝ զայրացման և անբաւականութեան նշան էր երեւում աչքերի մէջն: Քանի մի բոպէ և ես լուռ մոռնջ նստեցայ մօտն, մտքումս զրի թէ որ էնպէս յամառված մնայ ևս փոքր ինչ, իննդրեմ աղաչեմ կակղացնել, ապա թէ ոչ՝ յանձարութեանէ վերադառնալ. — բայց բաղդաւորութեամբ, ինձ ևս տրտում կամ յօնքերս քաշ տուած տեսնելով կամ խղճահարեալ կամ ամաչեցեալ իւր բուն կերպարանքն փոխեց ի քաղցրութիւն ու նշանացի արաւ զլիտով տեղիցս վեր կենալ և երեկեան նստած քարի վրայ նրստիլ, ծալեց Սաղմոսն և բարեւեց կիտաբերան: Տեսայ չէ՛, նա իրան ծանր է ծախում՝ ուզում է ես սկսեմ խօսքի թեյն, վասն որոյ և հարցրի, ի՞նչպէս ես էսօր հայր սուրբ:

Համբերելով քանի մի բոպէ, ծանր և սառն պատասխանեց քթի տակովը, փառք Աստուծոյ:

Չէ՛, հայր սուրբ, կրկնեցի, կերպարանքիցը երևում է էսօր երեկուան վրայ լաւ եւս Աստուծով:

Ե՛հ, է՛հ, լաւ վատ, մէք մեր կեանքէն շատ տարիք է ձեռք ենք վեր առած . . . :

Հայր, շուտով նորա խօսակցութեան թեկն չկորնայ համար վեր առայ: Տէր, կեցցէ անձն իմ և օրհնեցէ զքեզ: Յայտնի է միայնակեցնելն աւելի միայնակեցութեանից կենդանան և կհիւանդանան:

Ընդ հակառակն, ով որ մինակութեանը սովոր է և կարող է գնահատել էն, կհհասկանայ՝ չկայ աշխարհքումն աւելի երջանկութիւն քաղցր քան զայն:

Եւս փոքր փոքր քաջայերութիւն էի ըստանում նրա էս ընտանի և հակիրճ խօսքերիցն, երբ և յանկարծ վեր առաւ, համեցէք, փոքր մօտ նստէ՛, երևի վանքիցը շատ շուտ ևս զուրս եկած:

Հրամարես, պատասխանեցի, առաւօտեան ժամը սկսեցին, ևս ևս զուրս եկի: Արկացայ նստայ էն տեղումն, ուր որ երկն Պօղոս վարդապետն էր նստած, զէմ յանդիման անկողնոյն, որում աւելի մօտիկ մին լերկ քարափ էր ընկած: Նայեց որսորդութեանս տուրակին ու հարցրեց, կղի՞նչ է ուսիցդ քաշ տուած:

Աս քաշեմ տուած, պատասխանեցի կիսածիծաղ, որ որքան թռչուն խփեմ՝ ածեմ սորա մեջը:

Ի՞նչ ևս խփել, հարցրեց, բեր տեսնեմ: Հանեցի ուսիցս դատարկ տուրակն իբրան տուի, նայեց՝ նայեց, վերադարձրաւ ինձ, ու ձեռքն մեկնեց հրացանիս, որ զրած էր ծեկանս վրայ: Չեան առաւ հրացանը, ինչպէս քաջ որսորդ, էս կողմն էն կողմն շուռ ու մուռ տուաւ, տեսաւ՝ երկու խողովակ ունի, երկու հրահան՝ առանց քարի, չկարողացաւ հասկանալ ինչպէս պէտք է ձգել, հարցրեց ի՞նչպէս էք ձգում սրբան, էս հրացան է միթէ:

Արբ ցոյց տուի (պիստօնի) գնեկն և նրա կրակ հանեկն, միմեանց վրայ շուտ շուտ դարտակուիլը, ապշած, աչքերը չըռած զարմացած մնացած զուրկ շարժելով - վեր առաւ - էս կերպ հրացանը առաջին անգամն է տեսնելս, ի՞նչ տեղի գործ է:

Պռանգատանի (Աւրուպացւոց) գործ, Հայր սուրբ, պատասխանեցի, միայնակացներն էսպիսի բաների հարկաւորութիւն ամենեկին չունին որ տեսնին, Ասղմոսն ու Ժամագիրքն է նոցա հրացանը:

Միայնակեացն ա՛խ քաշելով վերառաւ, որդի՛ ևս չէի ծնած միայնակեաց ընդիլ և էսպիսի տեղումն մնալ - բայց - բայց աշխարհքիս բերմունքն էին, որք ինձ ստիպեցին համարեա՞ կէս դար դալ թափառիլ ինչպէս վայրենի կենդանի էս սարերի զլեխն:

Արբ էս խօսքերը լսեցի, ուրախացայ, ըստ որում ինքն պատճառ տուեց հետաքրքիր լինելոյ, ժամանակ չկորցնելով հարցրի. չհասկացայ, հայր սուրբ, ի՞նչ մտքասեցիթ թէ՛ կրօնաւորութեան համար չէի ծնած, ապա ինչե՞ համար էիր ծնած:

Աղբայր, փոքր ինչ սպասեց և ապա վերառաւ, եղբայր մեք ևս ժամանակ ունէ՛, ինք աշխարհքումն օրեր անցկացնելոյ, բաներ տեսնելոյ . . . հրացաններ ձգելոյ . . . թուր, սուր խփելոյ . . . գործքեր կատարելոյ . . . ինչ և իցէ, թողեցինք էնպունք, թողեցինք . . . վերջերնիս տեսնում ևս հիմի. խաղաղ ու հանգստ կեանք . . . :

Ի հարկէ, ի հարկէ, ամենայն իրաց վերջն է զովելի. և ո՞վ, ո՞ր մահկանացուն չէ ցանկացել իւր վերջն խաղաղ անցկացնել, բայց . . . :

Ահա էդ բայցն է - ընդմիջեց խօսքս - էդ բայցն է ես, սիրելի՛ չուղեցի ունենալ էդ բայցը: Թողի աշխարհքիս փառքը, պատիւը, իշխանութիւնը, հարստութիւնը, կինս, զուստը, որդիս, զերդաստանս . . . ինչե՞ր . . . միայն, միայն էս անդորրը կեանքը: Հանդիստ խղճմտանքը ժառանգելոյ համար:

Հազուադիւտ է, հազուադիւտ, հայր, մեր օրերը աշխարհիս երեսին մարդ դանել՝ էդ վիճակումը:

Չէ, չէ . . . չէ՛ հազուադիւտ, ո՞վ զիտէ . . . ո՞վ կարող է սասել թէ՛ ինձ նմանը խակ և խակ, տե՛ս, նայէ՛, էն Արարատ սարի միջին չկոյ մին ուրիշը - ո՞վ դնաց, պտուտեց աշխարհքիս անթիւ սարերը:

Հայր սուրբ, ասեցի, ցանկալի էր ինձ լսել ձեր անցքը և էզպիսի եղանակաւ խրատակեաց ձգնաւորութեան պատճառը: Ամենքս մահկանացու ենք, զու՛ն ևս քո անցկացրած լաւ՝ վատ օրերը՝ լաւ կը լինէր պատմելը ինձ դո՛նէ, որպէս զի թէ՛ ո՛չ մեզ կարելի, յետագայից մին օգուտս խրատս, յորդորանք լինէր:

Ահա էդ էր պատճառն, որ չէի ուզում մահկանացուի հետ հաղորդութիւն ունենալ, էզպէս խօսքերով ինձ ուզում էս մեզաց մէջն թաթաւել, պատասխանեց նա:

Հայր սուրբ, կիսածիծաղ ասեցի, ի՞նչ էս հրամայում, ի՞նչ էս կասկածում, մի՞թէ, զու քո անցքը ասելով ինձ՝ մեզք էս համարում . . . զարմանք:

Ի՞նչ ասել է, թէ՛ յետագայից իմ անցքն պէտք է օգուտ բերէ, ի՞նչ է միտքդ, զրե՛ս, թողնե՛ս:

Հայր, էնպէս էս խօսում, որպէս թէ՛ քրիստոնեայ չես, ո՞ր անգայ զրեցին մեր

սրբոց վարքերն, ի՞նչ է «Հարանց վարքն», ի՞նչ «Յայտնաւորքն», «Նառնախրն» և այլն և այլն: Մի՞թէ էնքան սուրբերի, ձգնաւորների, միայնակեցների կեանքն որ զրած են՝ մեզք են վերաբերում եկեղեցւոյ սուրբ Հարցն: Հաւատացիր, էդ կարծիքը քեզ աւելի մեզքի տակ կրճզէ:

Արդի, իմ անարժան և մեղաւոր հոգիս — քաւ . . . քաւ լիցի . . . մեղաց քեզ Աստուած . . . թէ՛ համարձակի էդ գոնէ մտքէն անցկացնէ . . . Աստուած սիրես

Հայր, էս Հարանց վարք զրո՞ղ եմ . . . զնայ անցկացաւ էն ժամանակներն: Իմ նպատակս այն էր, որ եթէ շնորհ անես, սրտմես, ո՛չ թէ ինձ մի մեծ լաւութիւն արած կլինիս, այլ և քո սրտի և հոգւոյ համար էլ անշուշտ մի մեծ թեթեւութիւն կը լինի. — օրէնք է մահկանացուաց, իւրեանց վշտերը, նեղութիւնները, անցկացրած օրերը խօսելիս՝ մի հոգւոյ քաղցրութիւն կըզգան:

Այդ ճշմարիտ է և էս կընդունիմ, բայց նոցա համար է էդ ասած, որք երիտասարդ են և կամ թէ՛ զանգատ ունին մինիցն:

Քաւ լիցի, հայր — ասեմք քո ասածը ուղիղ է, մի՞թէ և զու աշխարհքիցս զանգատաւոր լինիս՝ մին վնաս կրերես քո հոգւոյն. քաւ լիցի: Այս ասեցի, բայց խկոյն մտածեցի թէ՛ նրան հակառակելոյ ժամանակն չէ, վասն որոյ և շուտով փոխեցի խօսքս ասելով, իմ խնդիրքս այն է, որ զու քո պատմութիւնը ասելով՝ էս և ինձ նրմանը, ով կամ ոք որ լինի, երբ լսէ, կըզգուշանայ ու աշխարհիս ստապատիւր փառքէն, պատուէն չի խարուիլ: Արեմն եթէ այն լսողը զգուշանայ, և պատճառը զու

լինիս, մի՞թէ քեզ վարձք շատից քչեց չե՞ լինիլ :

Արդի, իմ պատմութիւնը երկար է, ի՞նչ հարկաւոր է քեզ հղպէս բաներ հարցնել. միտքդ ի՞նչ է, ասա՛ պարզն :

Չայր, հաւատացիր, ոչինչ նպատակ, միտք, դիտաւորութիւն չունիմ, դէ՛, մին լաւ մտածէ, ի՞նչ նպատակ պէտք է ունենամ ես, - էս է իստակ խօսքս և պարզն ասեմ, հետաքրքիր եմ իմանալ քո ուստից լինելը, թէ և արտասանութենէդ իմանում եմ՝ Նոր Թուղայու Չայերիցն ես, բայց քո անունը, ի՞նչ ազգից, գերդաստանից և պատճառն էսպէս տեղում ճգնուելոյ ցանկանում եմ լսելը: Ահա իմ դիտաւորութիւնը, հաւատացէ՛ք ուրիշ ոչինչ չկայ:

Արդի ասեց, երկար է իմ անցքը:

Չայր, որքան և երկար լինի՝ ես ուրախութեամբ կլսեմ, մին, երկու, երեք, մինչև տասն օր էլ որ ասես, կգամ կնստիմ էստեղ, առաւօտից մինչև երեկոյեան, կըլսեմ, միայն թէ դու շնորհ անես, ասես, ես խնդրում եմ քեզ :

Ժամաչափ ժամանակ քաշեց, որ ես խնդրում էի նրան, իսկ նա միշտ ընդդիմանում էր ինձ, թէև քանի մի բառ ասում էր, որոց միջին հօր անունը յիշելով կիսատ-միսատ և կամ էս տեղաց էն տեղաց խօսքեր խառնելով ծամ-ծումով : Աս ևս չընդունելով և խնդրելով համոզում էի՝ սկզբիցը իւր պատմութիւնը սկսէ: Ի վերջոյ ստիպեալ իմ շատ աղաչանքէն՝ մին քանի անգամ անս քաշելով, սկսեց ասին, երբ և ես ականջներս սրեցի, ունին զրեցի ուշադրութեամբ:

«Թա՛հմազ Առւելի խանը, որ և յետոյ՝ Նազիր - շահ անուանեցաւ, երբ Աբասայ կողմերքումը կռիւ էր անում ընտում, յարթութեան ձէնը հասնում է Արաստուն, որ Օսմանեան տէրութեան ներքոյ էր էն ժամանակն: Թիֆլիզ, որ Արաստանի երեւելի քաղաքն էր ու էն տեղ Արացւոյ Ալալիքն կամ Խաներն կընտտէին, Օսմանցւոյ ձեռքին լինելով էն ժամանակն, վասն որոյ Օսմանցւոյ փաշէքը կամ գլխաւոր կառավարիչները էլ էն տեղ կընտտէին. էս կառավարիչների զբոհողութիւններիցը և նեղութիւններիցը յուսահատուած Արացի և Չայ իշխանները և ազնիւները ժողովում են ծածկաբար երեւելի ու խելացի Չայ Աշխար Բէկ իշխանի (Բէհէթ-Մեանոյ) տանը, խորհուրդ են անում՝ ի՞նչ հնարքով կարողանան Օսմանեան տէրութեան փաշէքանց անխրաւութիւններիցը և լծի տակիցը ազատուին, ու մտնեն Նազրի զրօշակի տակը, որոյ արդարազատութեան լուրը միշտ դալիս հասնում էր սոցա ահանջը, ինչպէս սովորութիւն է աշխարհքիս միջն. ամեն ժողովուրդ կը զերազանցէ առանց նպատակի շուտ շուտ փոփոխել իւր տիրոջն, միշտ լաւ կողմիցը նկատելով նոր տիրապետողին կամ յուսալով, որ նոր տիրոջն աւելի ևս անդորրութիւն ստանայ: Շատ խօսակցութեանց յետոյ՝ Արաստանի իշխանները վճռում են, խրնդիրք, մահսէր զրել Նազրին և հրաւիրել դալ Արաստունը ազատել Օսմանցւոյ ձեռքէն: Մահսէրն պատրաստվում է: Արտրուտում են լաւ և յարմար մարդ գտնել մահսէրն տանելոյ համար: Աս վիճակը ընկնում է պապիս վրայ, որ Աշխար Բէկի հօր եղբօր որդին է լինում, լաւ տեսքով աղա-

մարդ և քանի մի անգամ Պարսկաստան եղած և պարսկերէն լեզուն տեղեակ: Պարս Աէօրզ կամ Պէօրզի անուամբ, մահսերովը ծանասարհ է ընկնում ծպտեալ և ծածուկ դէպ ի կողմն Արեւանայ և էն տեղաց Նաղրի բանակը:

«Քանի մի օրից յետոյ խորհրդակից Վրացի իշխանների մինը՝ որ ժամանակաւ կըրըրում թէ Ախալցխայ տաճկացած, Աշխար բէկի և քանի մի երեւելի իշխանաց հետը հաց ուտելիս կուզում է, զնում է էն ժամանակվան զխաւոր Իսհաղ փաշէն հասկացնում է էս անցըր. Իսհաղ փաշէն հրամայում է Աշխար բէկին, զաւակացը և կնոջը յանկարծ բռնեն: Միւս խորհրդակիցները իւրեանց ահու ժողովում են զնում փաշէն յայանում, թէ մատնողն թշնամի է Աշխար բէկին և անհիմն է նորա սաստուածիւնը: Փաշէն նայելով ժամանակի հանդամանացը և ժողովրդի ապրատամբութենէն երկիւղ կրելով, ընտանացը ազատում է և իշխանացը միամրտացնում — թէ վաղն ես Աշխար բէկին կհհանեմ բանտէն, ու ծանապարհ ձգում բազմութեանը. իսկ զիշերը հրամայում է Աշխար բէկին խեղզում են, և զին առաւօտեան տանում են ձգում մին փողոցի մէջը, ուր սպանւողի երեւելի քարվանսարէն է լինում: Աւ ըստ որում մեծ զուամար էր հարկաւոր էն ժամանակուայ տաճկաց զօրացը ռոճիկ հատուցանելոյ համար, վասն որոյ փաշէն յիտուն հաղար ծառէլ է առնում ու հրամայում տանն թաղեն: Իսհաղ փաշէն տեսնում է արդարեւ Նաղրի զաւոյ լուրը դէպ ի թիֆլիզ հաստատվում է, սկսում է վրէժը հանել միւս խորհրդակիցներէն, որոց շատերն երկիւղի-

ցը զուրս են փախչում թիֆլիզից, զնում ամուր տեղրանք, որը շատ կան Վրաստանու արեւմտեան և հիւսիսային կողմերումը, ինչպէս լսած եմ:

«Մինչ այս մինչ այն՝ պապս լսելով էս համբաւները, և տեսնելով Նաղիրը այլ և այլ քաղաքների վրայ ուշանում է, էլ չէ համարձակվում վերադառնալ թիֆլիզ, մնում է Նաղրի բանակումը, պատերազմներումը փոքր ժամանակի մէջը իւրեան քաջութեանց և հաւատարիմ ծառայութեանց համար ռոճիկ, թոշակ և պարգևներ է ստանում Նաղրէն և յետոյ զխաւոր նշանակվում Խօրասան զաղթեալ Հայ ժողովրդոց վրայ: Ասել եմ, բայց մոռացել եմ լաւ մտիս չէ թէ ինչպէս է պատահում, որ ախամայ փոխում է հաւատըն և մահմետականութիւն ընդունում: Ասացի ախամայ, ըստ որում հայրս կպատմէր թէ Պէօրզի պապս զիշերները Սաղմոս, Աւետարան կկարդար և նրան ևս կարգալ կը տար, և թէ հայերէն Ա, Բ, և աղօթքները անդիր պապիցս էր սովորած: Ի վերջոյ պապս իւր ծառայութեանց փոխարէնը նշանակվում է Ասպահանու Հայոց վերայ կառավարիչ, և իւր նման հաւատուբաց մի Հայ աղջիկ ձարում և հետը պսակվում: Արանից մին տարի քանի մի ամիս անցած ծնում է հայրս, սրան թըլփատում են անուանում Ալահազիբի, և ծածկաբար կնքում, անունը զնում Աստուածատուր: Արկու տարի անցած ծնում է մին զուստը, որ անուանում են Բէհան:

«Ալահազիբի կամ Աստուածատուր հայրըս ծածկաբար, որպէս ասեցի, պապիս նրման քրիստոնէութիւն է անում լինում և յայտնի մահմետականութիւն: Ապատմը

Հայրս, թէ Պէօրդի պապս ամենայն զիշեր կժողովէր ինձ, մօրս և քանի մի ծածկաբար քրիստոնէութիւն անող ծառայք — որոց պրտուած զաած էր — առանձին մին սենեակում, որ նշանակուած էր միայն ազօթելոյ համար, էնտեղ Սաղմոս կքաղէին, ով որ ինչ ազօթք զիտէր՝ կկարդար, ժամ էկէսցէ կասէին, ազօթքներ կերդէին, և միւսներն էլ ականջ կղնէին, ու յետոյ կքնանային: Շատ անգամ շաբաթ զիշերները, ծպտեալ քահանայ կգար, էն սենեակումը պատարագ կանէր և կերթար: Արպատմէր թէ, տարին չորս անգամ կխոստովանուէինք ու կը հաղորդուէինք:

«Նաղրին սպանելուց յետը՝ Ջուզուիշխանութիւնը առնում են պապիցս: Սա էլ հարուստ լինելով և ճերացած՝ նստում է տանը — և այնուհետև ոչինչ պաշտօնի մէջ չէ մտնում մինչև իւր մահը, որ շատ ժամանակ չէ քաշում:

«Պապիս մեռնելուց յետը Ալե — մարզան խանի սպարապետներէն մինը զալիս է մրտնում՝ Ասպահան և Ջուզու Հայերիցը մեծ զումար փող է հաւաքում. — Հայրս զնում է նրան յայտնում իւր ում որդի լինելն և թէ ցանկանում է ծառայութիւն մտնել: Նա էլ ընդունում է հօրս իւր զօրաց մէջը ու հետը տանում ընդդէմ Վեարիմ Խան Չանդին:

«Ալե — մարզան խանին սպանելուց յետոյ Հայրս անցնում է Վեարիմ խանի կողմն — նրա և նրա եղբարց կամ զօրավարաց ներքոյ շատ պատերազմների մէջ պատահելով, իւր քաջութեանց համար խանութեան տիտղոս է ստանում, որ էն ժամանակները շատ մեծ պատիւ էր, և ոչ թէ որպէս յետոյ, որ անվանազան ծառայք

անգամ էին ստանում այս պատուանունը: Հայրս կպատմէր թէ Հայոց և Վրաց ազգն, որք կրնակէին Սան կիբարանայ չորեք կողմին, օրն մին Շահ անուամբ յառաջանալով, չէին իմանում որին ծառայեն, վասն որոյ և նշկահեցին Վեարիմ խան չանդին. սա մեծ զօրքով զնաց նոցա վրայ, լերանց ամենայն կողմն և կիրճերը բռնելով, սաստիկ կոտորած տուեց քրիստոնէից, և նոցա մանր երեխայքը 915 տարեկան արու և էգ՝ որքան կարողացաւ ժողովել տան՝ թուրքացրեց, և մնացեալ ճերոցն զազթել տուաւ յայլ և այլ զիւղօրայս բնակիչ ի մէջ մահմետականաց: Այս մի երեւելի զրգբազդ անցք է, որպէս կպատմէին. բայց իմ լաւ մտիս չէ: Շիրազ էն ժամանակը շատ Հայ բնակիչներ լինելով, Ալազվերդի խան հայրս աշատում է և ստանում սոցա վրայ կառավարչութեան պաշտօնը, ուր և պսակվում է մին դերի Հայ աղջկայ հետը: Ասպահանու բերել է տալիս իւր մօրը, քրվորը և ծածուկ Հայ ծառայիցը: Արկուտարի անցած չանցած ծնում եմ ես — թրքիատում են անունս զնում՝ Նաղուբ, և կնքում՝ Յակոր:

«Նրազի նման մտիս կըղայ մեծ մօրս, այս ինքն հօրս մօրը՝ որոյ անունն էր Մարիամ, և Պարսիկները Շահում կասէին, այս ինքն Շահի հետ խօսացող, ըստ որում՝ Նաղրի հետը կասէին մին քանի անգամ խօսացել էր սա: Յանու հօր սովորելս, երեսիս խաչակնքելը, ճերաղութիւնը, Հայր Քչն անգիր ասելս՝ նրան եմ պարտական: Տօն օրերը, որ նա շատ լաւ մտքով զիտէր, նոր նոր շորեր կհագցնէր ինձ և կասէր, որդի՛, էս օրը մի մեծ ուրախութեան օր է մեր Հայերին մեր Հայ-

րեննաց մէջը, մեր ևս պէտք է ծածկաբար էս օրվան տօնի յիշատակը կատարենք: Մի Օստիկի օր ծածկաբար մեր տանը կարմիր ձու են ներկում ու մին հաստ տաք տաք տալիս են ինձ: Այս իսկ և իսկ տանում եմ մեր զրացի մահամետական երեխայիցը ցոյց տալիս: Արեխայից մինը գնում է իւր մօր մօտը լաց ընում, թէ ինչե՞ ինչը կարմիր ձու չունի և թէ մեր տանը ներկում են: Են օրվան կարմիր ձուն ձեռքումս լինելոյ համար և էն էլ տաք, որպէս երեխ, տեսնում են զրացիքը՝ կարծիքի մէջ են ընկնում: Շահում մեծ մայրս շատ զբոսարութեամբ է կարողանում նրանց կարծիքը ցրել՝ ասելով թէ՛ իւր ազգականներէն մինը, որ մինչև էս օր քրիստոնեայ է մնացած, ըստ որում իւրեանց այս ինքն քրիստոնեայից զատիկ էր էս օրս, եկել էր տեսնելոյ, և ձու էր բերել, բայց ինքը Շահումը պիղծ իմանալով ձայի ձեռքէն էն օրվան ձուն ընդունելը, վերադարձրել է բերողին, և միայն մին հաստ վեր է առել տուել երեխային, որ տեսած էր և լաց էր լինում, և թէ եթէ երեխայն ուտէր էլ, չէր ընդդէմ մահամետական կրօնից, ըստ որում երեխայ էր: Իսկ և իսկ մին մոլայ է պատահում անցկենալիս, ժողովուած կանայքը հարցանում են մօլին, որ թէ և հաստատում է Շահումի կարծիքը, այսու ամենայնիւ կասկածանքից չեն դուրս գալիս, բայց շատ ժամանակ չքաշեց, էս խորութիւնը վեր առնուեցաւ, և նոցա կարծիքը փարատուեցաւ, երբ հայրս օր ըստ օրէ երեւել եղաւ և համբաւ ստացաւ ժողովրդի և երեւելեաց առաջին, ոչ միայն ձայոց վրայ գլխաւոր լինելոյ համար, այլև երբեմն երբեմն կառավարութիւններն փո-

խուելով, ամենայն նոր եկողացը ծառայութիւն անելոյ և յառաջադէմ նոցա մօտը լինելոյ համար:

«Որպէս ծնողքս՝ նոյնպէս էլ ամենայն ազախինք և ծառայք որպէս յիշեցի՝ ծածկաբար քրիստոնեայ էին, ինձ ևս սնունդ են տալիս որպէս քրիստոնեայ: Օրս քոյրը կեանքը վճարում է մարդու չգնացած, ումը կարող էր դնալ՝ երբ յայտնի մահամետական էր: Մեծ մայրս խորին ճերութեան մէջը, և մին աշխատաւոր աղախին, որ Աւարաբազցի էր և պինդ քրիստոնեայ, սոքա ևս մօխ կգայ՝ Շիրազ մեռան: Ասխքան հողի աւանդելները՝ խոստովանուեցան և հաղորդուեցան: Ինձ սոքա, որքան կենդանի էին, ինչպէս ասացի՝ կարմիր ձուի անցքից յետոյ էլ թոյլ չէին տալ մահամետական զրացի երեխայից և հասակակից ներխ հետը խառնուիլ: Արեխայութիւնըս չորս պատի մէջը անցկացրի:

«Գիշերները մին տիրացու կգար ինձ հայերէն կարգալ կտորվացներ, ցերեկը մին Պարսիկ՝ պարսկերէն:

«Աւաւ մօխ կգայ, ձայոց քահանայքը և երեւելքը համարձակ տուն դուս կանէին մեր տունը, երբ զանգատ էլ չունենային: Արբ հայրս կուռի կամ ծառայութեան համար Շիրազիցը դուրս դնացած կլինէր, մեր տան մտնը և կառավարութիւնը ձայոց ձեռքին կլինէր, և նոցա զանգատանացը վերահաստութիւն կգործէր մեծ մօրիցս յետը՝ մայրս՝ որ մին աշխոյժ կառավարիչ և ջերմեռանդ քրիստոնեայ կին էր:

«Հասած երեխայ էի և լաւ յիշում եմ, որ Թիֆլիզու Աշխար բէկի կղբայրն էր, եղբօր որդին էր կամ նրա մօտիկ ազգականներից մին մօտիկն էր, եկաւ գնայ ձըն-

ղրատան, թէ Հինդուստանու էր դալիս, մեր տանը իջաւ: Մասնատականաց մօտ արգելաձ էր մեզ նորա հետը հազորդակցութիւն անելը, հետի կնատեկնք, ջոկ հաց ջոկ ամանում կոային նրան և նրա ամանովը ջուր չէինք խմել, իբր անսուբբ է. բայց երբ մէք ու մէք կլինէինք, միասին հաց էլ կուտեկնք, զինի էլ կրխմէինք հացի վրայ՝ մանաւանդ զիշերները: Կա շատ աշխատեց, յորդորեց հօրս, որ ընտանիքով գրնայ թիֆլիզ: Բայց անկարելի էր, որպէս հայրս խօսում էր նրա հետը, նախ հեռուորութեան, երկրորդ էն խառն ժամանակի համար, որ մին քաղաքի կամ զիւղի գլխաւորը միւսներին չէր հնազանդվում, ամենայն տեղ մին մին ինքնազուլ տիրապետող էր լոյս ընկած: Բոլոր Պարսկաստունը երկրման մէջն էր: Սա կպատմէր, որ պատկիս ազգականներն թիֆլիզ մեծ անուան, հարբատութեան, կալուածոյ և փառքի տէրեր են:

«Արանից յետը մին Ապիսկոպոս և ս կիւզնաց Հնդկաստան երբ և հայրս Շիրազ չէր: Էս Ապիսկոպոսն իջաւ Հայոց եկեղեցւոյ խցերումն. — ամենայն զիշեր մեր տանիցը նորա համար ծածուկ կերակուր՝ քաղցրեղէն կը տանէին, և մին զիշեր էլ մայրս ինձ ուղարկեց նորա աջը համբուրելոյ՝ — սա օրհնեց և մին Մասունք կախեց շքինքէս ու ասաց, որդի՛ թէ էս միշտ ձօնիցդ քաշտուած պահես, երբէք քեզ պատերազմումը հրացանի կամ թնդանօղի գնտակ չի զիպչել, ինչ նեղութեան և վշտութեան մէջ ընկնիս, թէ ջերմեռանդ հաւատով յուսաս, ազօթես, էս Մասունքի զօրութեամբ անպատճառ կազատվիս:

«Միայնակեացն էս ասեց ու շտպի տակիցը, որ ձօնիցը քաշ էր տրած մին կեղ-

տոտ կտաւով էն Մասունքը, հանեց ինձ ցոյց տուաւ, և ստիպեց համբուրեմ: Եհայ, որդի, կրկնեց, որդի էս է էն Մասունքը, որ մինչև ցայսօր ունիմ և փորձած եմ շատ անգամ ևս հաւատուբաց, ևս հաւատադրուծս պատերազմների մէջ և նեղութեանց պատահելիս՝ յիշած ու ապաւինած սրան՝ աղատուած եմ սորա զօրութեամբը:

(Շարունակել)

ԳԱՆՈՒՍ ՇԻՐՄԱԶՆԵՆԵԱՆՑ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Չմեռնի Գաղղիա. — Արուեստահանդես Գաղղիոյ ի 1878 ի. — Հայք ի նոյն արուեստահանդիսի. — Բարեկարգութիւն և նախանձախնդրութիւն Հանրապետիւն. — Հոռոյթեղանակ եկեղեցականութեան դատարարութիւն. — Հայոց և հոռոյթեղանակ դպրոցաց մէջ եղած սարբերութիւն. — Ազատ ուսումնարաններ և դասարանաց Համալսարաններ. — Համալսարանական սարեղատ. — Խրախոյս և կարգիւնարութիւն. — Ոսկեայ սապակ յանու և ի նուր պատի. — Պատական կղերականաց բշխմի. — Եկեղեցականաց անուանութեան հարց. — Նուրք ի նպաստ համալսարանաց պատկանաց. — Հայոց համար:

Եյս տարի գարմանալի ձմեռ է Պրանսիայում և մանաւանդ Փարիզում. ամբողջ Յունվարը անցաւ և Փետրվարը արդէն վերջանում է և այստեղ դեռ ձիւն չէ եկած: Փարիզում եղանակը շատ տաք է և ըստ հարիւրաստիճաննայ ջերմաչափի տասը աստիճանից չէ պակասում. ծառերը և բոյսերը պարտեզներում արդէն կանաչեցան, ցորեանը և բանջարեղէնները